Արձանագրություն N 2

<<ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/2>> ծածկագրով ՀԲՄ ընթացակարգով հայտարարված գնման ընթացակարգի հայտերի բացման հանձնաժողովի նիստի

11 հուլիս 2022թ.
ք.Ծաղկաձոր ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ռ.Եղիազարյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
անդամներ՝ Ն.Խաչատրյան - համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար
Զ.Բաբախանյան - համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Գ.Առաքելյան- համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնակատար
Գ.Հակոբյան - համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի,առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար
քարտուղար՝ Ա.Ավետիսյան- համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություններ <<ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/2>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2022 թվականի հուլիսի 11-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարան՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում: Գնման առարկա է հանդիսանում ***<<Ծաղկաձոր համայնքի Մեր Մկրտչյան և Չարենցի փողոցների հենապատերի վերակառուցման աշխատանքներ>>*** -ը:

2. <<ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/2>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների և ներկայացված գնային առաջարկների մասին

2.1 Գնման ընթացակարգին հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը	Էլ.փոստի հասցեն
1.	<<ՍԵԹՇԻՆ>> ՍՊԸ	setshinllc@gmail.com
2.	<<Թրենդ>> ՍՊԸ	trend.trend90@mail.ru
3.	<<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ	info@legendint.com
4.	<<Գլավդորստրոյ>> ԲԸ	glavdorstroy.ao@inbox.ru

2.2 <<ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/2>> ծածկագրով ընթացակարգին մասնակիցների կողմից նախնական ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժնի անվանումը և գնման գինը	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
1. ***<<Ծաղկաձոր համայնքի Մեր Մկրտչյան և Չարենցի փողոցների հենապատերի***	<<ՍԵԹՇԻՆ>> ՍՊԸ	109 309 979	21 861 996	**131 171 975**
	<<Թրենդ>> ՍՊԸ	109 264 932	21 852 986	**131 117 918**

վերակառուցման աշխատանքներ>>- 131 207 210	<<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ	109 128 320	21 825 664	**130 953 984**
	<<Գլավդորստրոյ>> ԲԸ	110 000 000	22 000 000	**132 000 000**

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

Ընդունել ի գիտություն, որ

3.1 << ՍԵԹՇԻՆ >> ՍՊԸ-ի և <<Գլավդորստրոյ>> ԲԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: **Հանձնաժողովը որոշեց՝ << ՍԵԹՇԻՆ >> ՍՊԸ-ի և <<Գլավդորստրոյ>> ԲԸ-ի հայտերը գնահատել՝ բավարար:**

3.2 **<<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ի և <<Թրենդ>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտերում առկա են** անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

- **<<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ - 1. Լիցենզիայի պահանջվող ներդիրը /Տրանսպորտային/ չի ներկայացվել:**

- **<<Թրենդ>> ՍՊԸ –Լիցենզիան ներդիրներով չի ներկայացվել**:

3.3 Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' Կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաողովը որոշեց.

3.3.1 Մեկ աշխատանքային օրով՝ մինչև 13.07.2022թ. ժամը 16:00-ն կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը,

3.3.2 Ծանուցել ընկերություններին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022 թվականի հուլիսի 13-ին, ժամը 16:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	**Ստորագրությունը**
Նախագահ՝ Ռ.Եղիազարյան	
Անդամներ՝ Հ.Բաբախանյան	
Ն.Խաչատրյան	
Գ.Հակոբյան	
Գ.Առաքելյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	